

ԳԻՏԱ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՐԴԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ
ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

Մարդը բնության մի մասնիկն է, նրա զարգացման բարձրագույն արդյունքը: Նա բնականի (կենսաբանականի) և սոցիալականի մի անխզելի միասնություն է: Բնության և մարդու միջև անդադար տեղի է ունենում փոխազդեցության պրոցես, որի արդյունքը լինում է երկուստեք փոփոխությունը. իր աշխատանքային գործունեությամբ մարդը վերափոխում է բնությունը, աշխարհը, միաժամանակ փոփոխվելով նաև ինքը, կրելով շրջապատող բնական և հասարակական միջավայրերի ներգործությունը: Ի տարբերություն կենդանիների, որոնք շրջապատող բնության մեջ որոշակի փոփոխություններ են առաջ բերում իրենց իսկ ներկայությամբ՝ կենսաբանական իրենց պահանջ-մունքները բավարարելու պրոցեսում և շրջապատող միջավայրին հարմարվում են՝ ենթարկվելով կառուցվածքային ու ֆունկցիոնալ փոփոխությունների, մարդը աշխատանքային գործունեությամբ միջավայրն է հարմարեցնում իր պահանջմունքներին, իհարկե, ինքը ևս ինչ որ չափով ենթարկվելով ֆիզիկական և ավելի շատ՝ հոգևոր վերափոխումների:

Բնության, շրջապատող միջավայրի ու մարդու փոխհարաբերության բնույթը փոփոխվում է հասարակության զարգացման համեմատ: Այն պայմանավորված է ինչպես գիտա-տեխնիկական զարգացման մակարդակով, այնպես էլ հասարակական-տնտեսական ֆորմացիայի բնույթով, արտադրա-եղանակով:

Գիտա-տեխնիկական արդի հեղափոխությունը տնտեսապես զարգացած երկրներում բնութագրվում է մի շարք առանձնահատկություններով, որոնք իրենց կնիքն են դնում հասարակության կյանքի բոլոր կողմերի վրա, մարդկությանը առաջադրելով խիստ բազմազան, բարդ պրոբլեմներ և տրամադծորեն հակառակ սոցիալական հետևանքներ են առաջ բերում սոցիալիզմի ու կապիտալիզմի պայմաններում:

Գիտության և տեխնիկայի արդի առաջընթացը բնութագրվում է ամենից առաջ աննախընթաց արագ տեմպով, տեղի է ունենում արտադրության ավտոմատացում՝ ավտոմատացվում են ամբողջ ցեխեր և գործարաններ:

Ավտոմատ կառավարման սիստեմները փոխում են ֆունկցիաների բաժանումը մարդու և մեքենայի միջև. եթե առաջներում աշխատանքի գործիքները մարդու ձեռքերի, մկանային աշխատանքի շարունակությունն ու ուժեղացումն էին հանդիսանում, ապա կիրեռնետիկական ավտոմատ արդի սիստեմները շարունակում և ավելի ինտենսիվ են դարձնում մարդու ուղեղի աշխատանքը:

Մտավոր բազմաթիվ գործողություններ, որոնք առաջներում կատարվում էին բացառապես մարդու կողմից, այժմ անցել և անցնում են մեքենաներին: Աշխատանքն ավելի ու ավելի ստեղծագործական, կառավարչական և վերա-

հսկողական բնույթ է ստանում: Մեքենա-մարդ փոխհարաբերության մեջ ավտոմատ կառավարման ստեղծված շղթայում մարդը հանդես է գալիս որպես առաջատար օղակ:

Մարդու՝ զարգացող տեխնիկա-տնտեսական պահանջմունքներով կյանքի կոչված և ձևավորված ունակություններն ու հմտություններն իրենց հերթին մեծապես նպաստում են գիտա-տեխնիկական հետազա առաջընթացին:

Գիտա-տեխնիկական արդի հեղափոխությունը տնտեսապես զարգացած երկրներում ուղեկցվում է մի շարք պրոցեսներով, որոնք սոցիալական ուլիշ ալլ հետևանքների հետ միասին ներգործում են մարդու ռեակտիվության վրա. էական տեղաշարժեր առաջ բերելով բազմաթիվ հիվանդությունների էթիոլոգիայում և պաթոգենեզում:

Այդ պրոցեսներից է ժամանակակից քաղաքակրթությանը ուղեկցող ուրբանիզացիան՝ արդյունաբերության և բնակչության կենտրոնացումը խոշոր քաղաքներում, որը մեծացնում է մարդկանց շփումը արտադրության մեջ և տրանսպորտում, նպաստում վարակիչ, մանավանդ համաճարակային հիվանդությունների արագ տարածմանը:

Ժամանակակից արտադրությունը, տեխնոլոգիական բարդ պրոցեսները հաճախ պահանջում են անընդմեջ օրուգիշերային աշխատանք, որը խախտում է մարդու աշխատանքի և հանգստի հերթափոխման ռիթմը, քնի ռեժիմը, ընտանիքի հետ նորմալ կոնտակտը:

Ուրբանիզացումը իր հետ բերում է արտադրական փոշի, աղմուկ, մթնոլորտային օդի աղտոտում, որոնց դեմ մարդիկ հաճախ անզոր են կամ վատ են պայքարում: Ծաղկնական «Մուլնիտ» թերթը դառնորեն նշում է, որ Տոկիոյում, 12-միլիոնանոց այդ խոշորագույն քաղաքում, գործարանային խողովակներն ամեն օր օդ են շարտում 20 տոննա չարման պրոդուկտներ: Աղմուկը դերհոգնածության, ներվաճեղանյութային խանգարումներից բացի առաջ է բերում նաև պրոֆեսիոնալ խլություն: Համաշխարհային առողջապահության կազմակերպության (ՀԱԿ) տվյալների համաձայն, ԱՄՆ-ում ներկայումս 8—10 միլիոն մարդ լսողական պարանոխ կարիք է զգում: Մոտավորապես նույն պատկերն է տնտեսապես զարգացած նաև մյուս կապիտալիստական երկրներում:

Գիտա-տեխնիկական հեղափոխության, խոշոր մեքենայական արտադրության մեր դարում աճում է նաև փողոցային և արտադրական տրավմատիզմը: Բարձր զարգացած կապիտալիստական մի շարք երկրներում այն ազգային շարիք է դարձել: Յուրաքանչյուր 13 րոպեում ԱՄՆ-ում ճանապարհային աղետի պատճառով մեռնում է մեկ մարդ: 1966 թ. ԱՄՆ-ի ճանապարհների տեղի է ունեցել 15 միլիոն դժբախտ պատահար, որից մահացել է 51 հազար մարդ: Անգլիայի ճանապարհների ամեն օր մահանում է 22 մարդ, վնասվածքներ է ստանում 1068 մարդ: 1965 թ. յուրաքանչյուր 66 րոպեում մահացել է մեկ մարդ: Մահացությունը դժբախտ պատահարներից ներկայումս զարգացած կապիտալիստական երկրներում մահացություն ընդհանուր շարքում բարձրացել է չորրորդ տեղը:

Էապես փոխվել է մարդու սնունդը: Ներկայիս մարդը ավելի ու ավելի հաճախ է օգտագործում կոնսերվացված, դենատուրացված սննդանյութեր, որոնք զուրկ են բավարար քանակությամբ վիտամիններից և սննդի բնական ինգրիդիենտներից: Սրան ավելացրած նաև այն, որ տնտեսապես զարգացած երկրներում գյուղատնտեսության վնասատուների դեմ պայքարի նպատակով օգտագործվում են թունաքիմիկատներ, որոնք որոշ դեպքերում թափանցում

են նաև բուսական (հնարավոր է նաև կենդանական) սննդի մեջ, բացասաբար ներգործում մարսողության վրա:

Կապիտալիստական բարձր զարգացած երկրի մարդը ավելի շատ է տեղին կամ անտեղի գործածում դեղամիջոցներ, որոնք հարաճուն չափերով արտադրվում և անզուսպ կերպով ռեկլամվում են դեղագործական արդյունաբերության կողմից: Դեղամիջոցները լուրջ տեղաշարժ են առաջ բերում կենսապրոցեսներում, զգալիորեն փոխում օրգանիզմի ռեակտիվությունը: Դեղերի օգտագործումը Արևմտյան Եվրոպայում, սկսած 1960 թվականից, ավելացել է 15 անգամ, իսկ նրանց վրա արվող ծախսերը՝ 20 անգամ: Անարգել ռեկլամի հետևանքով դեղամիջոցների գործածությունը հատկապես մեծ է ԱՄՆ-ում, լուծողական միջոցների վրա ԱՄՆ-ի բնակչությունը ամեն տարի ծախսում է 146 միլիոն դոլար: 1964 թ. օգտագործվել է 400 տոննա ասպիրին, 1958 թ.՝ 350 տոննա քնաբեր և 450 տոննա հանգստացնող դեղամիջոցներ. (տարեկան մեկ մարդուն ԱՄՆ-ում միջին թվով ընկնում է 200 հար հանգստացնող դեղ): Անզլիացի վիրաբույժ Դիքսոն Ռայտը գտնում է, որ անտեղի և անչափ անտիբիոտիկներ ընդունելուց Անզլիայում ամեն տարի մահանում է 1000 մարդ: Նրա կարծիքով անզլիացիները 20 անգամ ավելի են ընդունում անտիբիոտիկներ, քան անհրաժեշտ է:

Գիտա-տեխնիկական առաջադիմության և նրա հետ կապված վերահիշյալ սոցիալական պրոցեսների հետևանքով զգալի կերպով փոխվել է հիվանդացության և մահացության պատկերը տնտեսապես բարձր զարգացած երկրներում: Բազմաթիվ հիվանդություններ (ռևմատիզմ, բրուցելլոզ և այլն) ներկայումս ընթանում են այլ կերպ, քան 50—100 տարի առաջ՝ կապված օրգանիզմի ռեակտիվության փոփոխության հետ:

Արտադրության ավտոմատացումը և կիրեննիտիզացիան, որ ավելի ու ավելի են մեծացնում մտավոր աշխատանքի ծավալը և մարդու կողմից ներվաճողական էներգիայի ծախսը ի հաշիվ մկանայինի, բերում են գերազանցապես մտավոր աշխատանքի մարդկանց հետ պատահող այնպիսի հիվանդությունների աճման, ինչպիսիք են աթերոսկլերոզը, հիպերտոնիկ հիվանդությունը, սրտամկանի ինֆարկտը, մտավոր գերտեղանոթությունը և այլն: Աշխատանքային և կենցաղային հարաճուն տեմպի, շտապողականության ու ներվաճողական լարվածության հետևանքով, զարգացած կապիտալիստական շատ երկրներում աճում, իսկ ԱՄՆ-ում տաճնապալի չափերի են հասնում ալերգիկ և ներվաճողական հիվանդությունները:

Զգալիորեն ավելացել է թոքերի քաղցկեղը, որը պայմանավորված է օդաշարավոր արդյունաբերական այրման պրոդուկտներով շնչուղիների խրոնիկական վնասմամբ, ինչպես նաև ծխողների քանակի մեծացմամբ:

Վերահիշյալ հիվանդությունները, որոնց աճը զարգացած կապիտալիստական երկրներում ակնհայտորեն կապված է գիտա-տեխնիկական առաջադիմության հետ, արտասահմանյան որոշ սոցիոլոգների և բժշկության տեսաբանների կողմից (Ադլեր, Գյուան, Դյուսեր) անվանվում են ճբաղաբակրթության հիվանդություններ:

Որոնք են ճբաղաբակրթության հիվանդությունների» պատճառները և զարգացման հեռանկարները: ճբաղաբակրթության հիվանդությունների» պատճառը, նրանց կարծիքով, օրավուր խորացող հակասությունն է անզուսպ կերպով աճող սոցիալական տեմպի և մարդու՝ համեմատաբար կայուն, կոն-

սերվատիւ կենսաբանական ութմի միջև, սոցիալական դարգացման տեմպին մարդու կենսաբանական ութմի հարմարութիւնը չկարողանալը, այսպէս կոչված սոցիալական դեզադապտացիան: Դրան դիմակայելու, սոցիալական դեզադապտացիայից փրկվելու ոչ մի ուղի, նրանց կարծիքով, չկա, քաղաքակրթութիւնը մարդկութիւնը դեպի կործանում է տանում:

Սակայն սոցիալական դեզադապտացիայի տեսութիւնը վերլուծութիւնը մարքս-լենինյան փիլիսոփայութեան դիրքերից բացահայտում է նրա գիտական անճարակութիւնը:

Ամենից առաջ, հիմք չկա ենթադրելու, թէ սոցիալական և կենսաբանական ութմերի անհամապատասխանութիւնը մարդկութիւնը տանում է դեպի կործանում: Մարդկանց բարեկեցութեան և սոցիալական կատարելագործման գլխավոր ցուցանիշներից մեկը կյանքի միջին տևողութիւնն է, որը տնտեսապէս վարգացած երկրներում անշեղորեն բարձրանում է և հասել է 68—69 տարւոյ: Սրանով պետք է, ավելի շուտ, բացատրել այդ երկրներում սիրտ-անոթային որոշ հիվանդութիւնների (աթերոսկլերոզ, հիպերտոնիա, սրտամկանի ինֆարկտ) աճը, որոնք, ինչպէս հայտնի է, տարիքավոր մարդկանց հիվանդութիւններ են:

Անհիմն է նաև մարդու մոտ կենսական պրոցեսների անփոփոխութեան, կենսաբանական ութմերի կայունութեան մասին կոնցեպցիան: Իհարկե, մարդուն շրջապատող սոցիալական միջավայրը ավելի արագ է փոփոխվում, քան կարող են համապատասխանորեն վերափոխվել հազարամյակներում ձևավորված նրա կենսապրոցեսների ութմերը: Սակայն չպետք է մոռանալ, որ մարդը իր կենսաբանական ութմը՝ սոցիալական ութմին համապատասխանեցնելու կարիք չի զգում. մարդու սոցիալական էութիւնը, կենդանիներից նրան տարբերող հենց այն է, որ ոչ թէ ինքն է հարմարվում միջավայրին՝ փոփոխելով իր կառուցվածքը և ֆունկցիաները, այլ միջավայրն է հարմարեցնում իրեն: Վերափոխելով միջավայրը, մարդը ստեղծում է փրկենսական պրոցեսներին ներդաշնակ պայմաններ: Բացի այդ, Ա. Ա. Ուստոմսկին ութմի յուրացման մասին իր հայտնի տեսութեամբ ապացուցել է, որ չափավոր ուժի հարաճուն զրգիւններ տալու դեպքում օրգանիզմը կարող է յուրացնել նոր, հաճախ շատ բարձր ութմեր: Դրա գործնական վկայութիւնն են հանդիսանում ֆիզկուլտուրայի և սպորտի, ինչպէս նաև մտավոր դարգացման բնագավառում ձեռք բերվող ավելի ու ավելի բարձր նվաճումները:

Այլ բան է, երբ իր դարն ապրած կապիտալիստական հասարակութիւնը, որտեղ սոցիալական կյանքում իշխում են անարխիան և մոլի մրցակցութիւնը, որտեղ արտադրութիւնը՝ շահույթները բազմապատկելու նպատակ է, իսկ մարդու շահագործումը՝ դրան հասնելու միջոց, ի վիճակի չէ պլանային կարգով և գիտականորեն հիմնավորված սոցիալական այնպիսի պայմաններ ստեղծել, որոնք ներդաշնակվելին մարդու կենսաբանական ութմին: Դրանով պետք է բացատրել, որ ներվահոգեկան հիվանդութիւնները կապիտալիստական տնտեսապէս զարգացած երկրներում, մասնավորապէս ԱՄՆ-ում, ռեկորդային թվերի են հասնում:

Սոցիալական դեզադապտացիայի տեսութեան գլխավոր մեթոդաբանական արատը կայանում է նրանում, որ նախ այն խեղաթուրում է մարդու էութիւնը. անտեսելով մարդու սոցիալական բովանդակութիւնը և միակողմանիորեն չափազանցելով հիվանդութիւնների առաջացման մեջ կենսաբանականի դերը,

ներան ենթարկում է բիոլոգիզացման: Այդ տեսությունը «քաղաքակրթության հիվանդությունների» պրոբլեմը վերլուծելիս ելնում է «միասնական ինդուստրիալ հասարակության» մասին հակամարքսիստական տեսությունից, վերանայով տնտեսական, քաղաքական և սոցիալական սիստեմների այն էական տարբերություններից, որ գոյություն ունեն կապիտալիզմի ու սոցիալիզմի ժամանակ և պայմանավորում են քաղաքակրթության զարգացման երկու միանգամայն հակադիր ուղիները:

Սոցիալականի և բիոլոգիականի փոխհարաբերության, «քաղաքակրթության հիվանդությունների» առաջացման և զարգացման մեջ, անշուշտ, կան հարցեր, որոնք ընդհանուր հետաքրքրություն են ներկայացնում քաղաքակրթության թուր ժողովուրդների համար և անմիջականորեն կախված չեն տնտեսական ու սոցիալ-քաղաքական սիստեմից: Սակայն, թա հիմք չի տալիս ստեղծելու հասարակության առողջության վիճակի և նրա զարգացման հեռանկարների մասին տեսություններ, որտեղ անտեսվում է սոցիալ-քաղաքական սիստեմը, նյութական բարիքների արտադրության եղանակը և կոնկրետ դասակարգային վերլուծությունը նենգափոխվում է «միասնական քաղաքակրթության» մասին դատողություններով:

Բոլոր հիվանդությունների կապը սոցիալ-քաղաքական սիստեմի հետ միատեսակ, նույնատիպ չէ, ոչ միշտ ակնհայտ, սակայն ավելի կամ պակաս միջնորդված կամ անմիջական կապ միշտ էլ գոյություն ունի և այն պետք է արտացոլվի տեսության մեջ: Միթե պատահական է, որ Սովետական Միությունը, նախկինում հետամնաց, ագրարային երկիրը, որը տնտեսական զարգացման և կենսամակարդակով առաջնությունը դեռևս զիջում է զարգացած կապիտալիստական մի քանի երկրների, հասարակության առողջապահության ցուցանիշներով առաջ է անցել նրանցից և դա արվել է պատմականորեն շատ կարճ ժամանակամիջոցում՝ մի քանի տասնամյակում:

Սոցիալական դեզադապտացիայի տեսությունը, որը քաղաքակրթության անխուսափելի կործանում է գուշակում, բուրժուական սոցիոլոգիական մտքի անկման, դեգրադացիայի մի լրացուցիչ վկայություն է հանդիսանում, իմպերիալիզմի ընդհանուր ճգնաժամի դրսևորումներից մեկը: Սոցիալական դեզադապտացիայի տեսությունը իմպերիալիզմի պայմաններում գոյություն ունեցող դեզադապտացիան համարում է քաղաքակրթված բոլոր ժողովուրդների համար ընդհանուր երևույթ ու հեռանկար և, ինչպես մարդուն բիոլոգիզացիայի ենթարկող բաղմամբիվ այլ տեսություններ (սոցիալ դարվինիզմ, ֆրեյդիզմ, ստրեսս և այլն), փորձում է կապիտալիստական հասարակությանը հատուկ առողջապահական արատների մեղքը գցել մարդու կենսաբանական ուժի վրա:

Հայկ. ՍՍՀ ԳԱ Հայկական
Սովետական Հանրագիտարան

Ստացված է 16/IV 1969 թ.

Н. Г. АВАКЯН

СОВРЕМЕННАЯ НАУЧНО-ТЕХНИЧЕСКАЯ РЕВОЛЮЦИЯ

Резюме

Современная научно-техническая революция, имеющая ряд особенностей по сравнению с промышленной революцией 17—18 вв., наряду с другими социальными последствиями, оказывает существенное влияние также на реактивность организма, структуру заболеваемости и смертность населения экономически высокоразвитых стран. Намечается заметный рост некоторых сердечно-сосудистых, аллергических и эпидемических заболеваний, производственного и дорожного травматизма, рака легких и др.

Теория социальной дезадаптации, распространенная в буржуазной медицинской социологии, находясь под влиянием реакционной буржуазной социологии, причиной роста указанных заболеваний считает углубление противоречия и конфликт между быстро растущим темпом социальных условий и сравнительно консервативным биологическим ритмом человеческого организма.

Научная несостоятельность теории социальной дезадаптации заключается в том, что, во-первых, она биологизирует человека, недопонимая его социальной сущности, а именно: человек не сам приспосабливается к среде, а наоборот, своей трудовой деятельностью приспосабливает окружающую среду. Во-вторых, нет цивилизации вообще, а имеются две цивилизации: буржуазная и коммунистическая с противоположными перспективами их развития. Научно-техническая революция является серьезной опасностью для буржуазной цивилизации и здравоохранения, и, напротив, только коммунистический путь цивилизации обеспечивает наилучшие условия для всестороннего физического и духовного развития личности. В-третьих, несостоятельно также положение об устойчивости, неизменяемости биологических ритмов человека. В учении об усвоении ритма доказана возможность воспроизведения организмом новых, более сильных и частных ритмов раздражения.

ЛИТЕРАТУРА

1. Авакян Н. Г. Диссертация. Ереван, 1965.
2. Изуткин А. М. Программа КПСС и социальные проблемы медицины. М., 1964.
3. Лисицын Ю. П. В кн.: Философские и социальные проблемы медицины. М., 1966, стр. 338.
4. Царегородцев Г. И. Здоровье—общественное богатство. М., 1967.